



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 27 ՓԵՏՐՈՒՄ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ ԻՆՃ Իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո լամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 34


ԳՈՂՈՒԹԻԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Անդադար Տէրը պիտի օրհնաբանեն,
անոր օրհներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ:
Տէրն է միակ պարծանքս. թող փառապեալները լսեն եւ ուրախանան:
Ես Տիրոջ դիմեցի, եւ աղօթքիս պարասխանեց, զիս ազարեց բոլոր վախերէս:
Տիրոջ մօտեցեք, որպէսզի ուրախութեամբ ճառագայթեք,
եւ յուսախար չեք ըլլար բնաւ:
Ճաշակեցեք, եւ փետք՝ թէ ինչքան քաղցր է Տէրը,
երանի՛ անոր՝ որ Տիրոջ կ'ապաւինի:
Եկեք, որդեակներ, մտիկ ըրեք ինձի,
եւ ես ձեզի սորվեցնեմ՝ թէ ինչ է Տիրոջ վախը:
Կ'ուզե՛ս երկար կեանք ունենալ, կ'ուզե՛ս բարօր օրեր փեսնել.
Լեզուդ չարախօսութեան մի՛ ծառայեցներ,
շրթներդ բնաւ թող նենգութիւն չխօսին:
Հեռու մնա չարիքէն, եւ բարիք ըրէ,
խաղաղութիւն կամեցիր եւ զայն հետապնդէ:
Տիրոջ աչքերը արդարներուն վրայ կը հսկեն,
ականջները միշտ պարասար են անոնց աղաչանքը լսելու:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՐԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոովանի լիցի Ի վերայ իմ Ի տուէ եւ Ի գիշերի,
Ի նստիլ Ի տան, Ի գնալ Ի մանապարհ,
Ի ննջել եւ Ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ

ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ
3:1-12

ԼԵԶՈՒՆ ՍԱՆՁԵԼ (3:1-12)

Հերաքրքրականօրէն եթէ երբեք ուզենք ցանկ մը պարտաւարել ամենավրանգաւոր պաշտօններու մասին, երբեք նկարի պիտի չունենք ուսուցչութեան ասպարէզը, ինչպէս օրինակ՝ վրանգաւոր է հանգերու մէջ աշխատողին գործը, հրշեջին գործը, վիրաբուժին գործը, բայց երբեք ալ պիտի չմտածէինք թէ որքան վրանգաւոր է ուսուցչին գործը կամ պաշտօնը: Յակոբոս Առաքեալ, սակայն, կու գայ ցոյց տալու թէ որքան պարասխանաւոր ու հաշուետու գործ է, պաշտօն է ուսուցչութիւնը, մանաւանդ՝ եկեղեցւոյ մէջ, որուն համար ալ Առաքեալը կը զգուշացնէ ըսելով. «**Բոլորդ հեքամուր մի՛ ըլլաք սորվեցնելու, որովհետեւ անելի խստութեամբ պիտի դատուինք**» (1 հմբ):

Առաջին գլուխի աւարտին Յակոբոս Առաքեալ ցոյց կու տար թէ ով է իսկական ու անկեղծ բարեպաշտը, ան որ գիտէ իր լեզուին սանձ դնել (1:26): Ահա այդ մասին երկար բացատրութիւն է որ պիտի տայ այս գլխուն մէջ, մանաւանդ երբ ուսուցչութիւնն ալ տեղի կ'ունենայ լեզուի գործածութեամբ:

Զմոռնալով այն պարագան, երբ անցեալին չկար գրաւոր գրութիւն Աւերարանի, ուր հաւաքացեալներ իրենք կարդային կամ ուսումնասիրէին, ուրեմն պիտի երթային ուսուցիչին հարցնելու, սորվելու, հարցեր կապուած հաւաքքի, դաւանանքի, առօրեայ կեանքի հետ կապուած ապրելու իրենց հաւաքքը: Ուրեմն ուսուցիչը ինք պէտք էր սորված ըլլար, պարտաւար ըլլար որպէսզի կարենար պարասխանել, սորվեցնել փութել անձին հարցումին համաձայն: Այսպիսի երեսոյթի համար Պօղոս Առաքեալ կ'զգուշացնէր իր աշակերտին Տիմոթէոսին ըսելով. «*Շատեր Օրէնք սորվեցնելու ելեր են, մինչդեռ ոչ իրենց խօսածը գիտեն, ոչ ալ Աստուծոյ Օրէնքը, որուն մասին այնքան վարաստութեամբ կը խօսին*» (Ա Տիմ 1:7):

Ահա Յակոբոս Առաքեալ կը զգուշացնէ, թէ բոլորը հեքամուր չըլլան ուսուցիչներ ըլլալու, որովհետեւ պարասխանաւոր պաշտօն է: Այո, ուսուցիչներ պէտք են Եկեղեցւոյ համար, բայց որ Աստուծոյ կողմէ նշանակուած ըլլան: Ինչպէս պիտի ըսէ դարձեալ Պօղոս Առաքեալ, թէ Եկեղեցւոյ մէջ շնորհները այլազան են, բայց բոլորն ալ ուսուցիչներ չեն, ու չեն կրնար ըլլալ: Միւս կողմէ, իր աշակերտին պիտի ըսէ. «Որդեակս, Զրիստոսի Յիսուսի շնորհքովը զօրացիր, եւ այն՝ ինչ որ ես սորվեցուցի բազմաթիւ վկաներու ներկայութեան, նոյն բաները աւանդէ այնպիսի վարաստելի մարդոց, որոնք կարող ըլլան ուրիշներուն ալ սորվեցնելու» (Բ Տիմ 2:1-2): Վարաստելի ու կարող:

Այո, նուիրական է եւ նոյնքան պարասխանաւոր, որովհետեւ լեզուն է որ ի գործ կը դրուի, որմէ կարելի է ակնկալել սխալ, շփոթեցուցիչ, անոր համար ալ որքան զգուշ պէտք է ըլլալ, որովհետեւ այդպիսիներուն նկարմամբ խիստ է դատաստանը (հմմտ Մարկ 12:40): Ուրեմն ինչպէս մօտենալ այս պարագային, ինչ ընել: Զգուշութեամբ մօտենալու, դանդաղ խօսելուն մէջ, նկարի ունենալու պարիժի բաժինը, եւ ի վերջոյ, անկեղծութեամբ:

Զգուշութեամբ մօտենալու, ու մանաւանդ՝ խոնարհութեամբ ընդունելու փրկուած այդ շնորհքը, որովհետեւ ուսուցչութեան մէջ հպարտութիւնն է որ դուրս կու գայ: Պարասխանաւոր եւ հաշուետու պաշտօն է ուսուցանելը, որովհետեւ պարասխանաւոր է ոչ միայն խօսածին, այլ նաեւ՝ ապրելակերպին համապարասխան իր խօսածին: Ի վերջոյ, անկեղծօրէն մօտենալու, որուն համար ալ Յակոբոս Առաքեալ կ'ըսէ. «**Բոլորս ալ յանցանքներ ունինք**» (2 հմբ):

Աստուածաշունչի ուսուցչին պարականութիւնն է բացայայտելու ինչ որ փակուած է, լուսաբանելու ինչպէս մութ թուացող է: Անոնր համար ալ անկեղծութեամբ մօտելու այդ շնորհքին թէ որքանով կրցաւ ուսուցիչը փալու ինչ որ պիտի փրուի, փոխանցելու ինչ որ պիտի փոխանցուի: Որքան զգուշ պէտք է ըլլալ, որովհետեւ կեանքի ու մահուան հարց է, որովհետեւ մեր գործերը հոգիներու հետ է, անոնց կանգնումին կամ քանդումին. զանոնք դէպի Աստուծոյ արքայութեան առաջնորդելու, կամ արքայութենէն հեռացնելու: Ուստի չենք կրնար ունենալ ուսուցիչ մը որ ամէն հարցումի պարասխան ունի փալիք, այլ՝ ուսուցիչ մը, որ բան մը չի գիտեր, պիտի սորվի, եւ ինչ որ գիտէ Աստուծոյ շնորհքովը, եւ վարաստելով Աստուծոյ: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «*Անոնք որոնք գիտենք, կ'ըսեն, խորքին մէջ բան մը չեն գիտեր*» (Ա Կորնթ 8:2):

Յաջորդող հապրուածը 3-12 հմր, Յակոբոս Առաքեալ կը ներկայացնէ լեզուն, որ ուրիշ բան չէ եթէ ոչ արարայայտիչը մեր հոգեոր ներաշխարհին: Այս իմաստով ալ Յակոբոս Առաքեալ ըսաւ. «**Իսկական ու անկեղծ բարեպաշտը, ան որ գիտէ իր լեզուին սանձ դնել**» (1:26): Ահա ասոր համար էր որ Առաքեալը զգուշացուց ուսուցչութենէն, որովհետեւ լեզուի օգտագործումը կայ ուսուցչութեան մէջ, եւ ով որ իր լեզուին սանձ չի կրնար դնել, ինչպէս կարենայ ուսուցիչ ըլլալ, երբ նոյն այդ լեզուն է որ պիտի ուսուցանէ: Որպէսզի կարենայ իր միտքը պարզել Յակոբոս Առաքեալ կ'օգտագործէ քանի մը օրինակներ անոնցմով ցոյց տալու եւ լուսաբանելու իր ըսելիքը կապուած լեզուին: Այս օրինակներուն օգտագործումը կը նպատակադրէ ուսուցանելու. օրինակ, ձիեր, նաւեր, կայծ, որ կրնայ անպատ մը հրդեհել, աղբիւր, թզենի, որթաբունկ:

Լեզուն փոքր է, բայց՝ զօրաւոր: Այնպէս ինչպէս ձիուն սանձը համեմատած ձիուն սանձը շար փոքր է, բայց այդ փոքր սանձով է որ ձին կը սանձեն: Նոյնպէս նաւը, որքան ալ մեծ է, բայց փոքր դէկ մըն է զինք դեկավարողը: Նոյնպէս ալ լեզուն, թէեւ փոքր է, բայց զօրաւոր: Այո, զօրաւոր, երբ նոյն լեզուով կրնանք ամբողջ աշխարհի դրուածքը փոխել: Բայց նաեւ նոյն լեզուն, որ կրնայ բացասական, ժխտական ազդեցութիւն եւ արդիւնք ունենալ, որմէ կը զգուշացնէ Յակոբոս Առաքեալ, որովհետեւ կրակ է, անիրաւութեան աշխարհ է, որ ամբողջ մարդը կ'ապականէ, գեհենի կրակով բռնկած (6 հմր):

Մարդուն չի հնազանդիր: Մարդը դարերու ընթացքին փորձեց իրեն ենթակայ դարձնել կենդանական աշխարհը, բայց չկրցաւ իրեն հնազանդեցնել լեզուն: Նոյն այն լեզուն, որ Աստուած պարզեց մարդուն անով արարայայտուելու, զԱստուած փառաբանելու, բայց նոյն այդ լեզուն կ'օգտագործէ խաբելու, սպելու, նենգութեամբ խօսելու:

Մեր մասին կը յայտնէ: Յակոբոս Առաքեալ կ'ըսէ. «**Անով կ'օրհնենք մեր Տէրը եւ Հայրն Աստուած, եւ դարձեալ անով կ'անիծենք մարդիկը, որոնք Աստուծոյ նմանութեամբ սրբեղծուած են**» (9 հմր): Ինչպէս օրհնել զԱստուած, երբ միւս կողմէ, Իր իսկ նմանութեամբ սրբեղծուած մարդիկը կը քննադատենք, կ'անիծենք, այդ բոլորը որո՞ւ հասցէին կ'ուղղուի՞ն, եթէ ոչ Աստուծոյ:

Յակոբոս Առաքեալ կ'ըսէ. «**Ասիկա ճիշդ չէ**» (11 հմր): Ինչպէս կարելի է նոյն բերնէն օրհնութիւն եւ անէծք դուրս գայ (10 հմր): Ուրեմն, այս բոլորը ցոյց կու տան, թէ ինչ որ լեզուն կ'արարայայտէ ուրիշ բան չէ եթէ ոչ մեր ով ըլլալը, եւ սրտին ալեցուքը, Յիսուս կ'ըսէ. «*Բերանը սիրտին մէջ եղածէն է որ կը խօսի*» (Ղուկ 6:45):

Ուրեմն ի՞նչ ընել. Սաղմոսերգոյի բառերով. «Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ով Աստուած, նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս» (Սաղմոս 51:10), որպէսզի երբ շրթներս բանամ, բերանս օրհնութիւն երգէ եւ Քեզի եւ Քու բոլոր արարածներուդ, որոնք Քու նմանութեամբ սրբեղծուած են: